

# 01-աղյուսակ

Տրված են  $n$  բնական թիվը և  $n$  տող և  $m$  սյուն պարունակող աղյուսակ, որի վանդակներում գրված են 0 կամ 1 թվերը՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ:

Պահանջվում է գրել ծրագիր, որը որոշ վանդակների 1-եր փոխարինում է -1-երով այնպես, որ արդյունքում ստացված աղյուսակի յուրաքանչյուր տողի և յուրաքանչյուր սյան վանդակներում գրված թվերի գումարը լինի 0,1 կամ -1:

## Մուտքը

Առաջին տողը պարունակում է  $n$  և  $m$  բնական թվերը ( $1 \leq n, m \leq 30$ ): Հաջորդ  $n$  տողերում տրված են աղյուսակի համապատասխան տողերում գրված  $m$  թվերը:

## Ելքը

Ելքում պետք է արտածել արդյունքում ստացված աղյուսակը, այսինքն  $n$  տող, յուրաքանչյուր տողում՝ իրարից մեկական բացակով անջատված,  $m$  թիվ:  
Բավական է գտնել որևէ լուծում:

## Օրինակ

### Մուտքը.

6 6

0 1 1 0 1 0

1 0 0 1 1 0

0 0 1 1 0 1

0 0 0 1 0 1

1 0 0 1 0 0

0 1 1 0 1 1

### Ելքը.

0 1 -1 0 -1 0

1 0 0 -1 1 0

0 0 1 1 0 -1

0 0 0 -1 0 1

-1 0 0 1 0 0

0 -1 1 0 -1 1